

Թեան հրաւիրուած էին քաղաքիս հայ հասարակութիւնը սոսկահարակ աղքատք և հարուստք:

Շամախուց հասարակութիւնը զգուժե արդարեւ այս մեծակշիռ կորուստը բայց մի և նոյն ժամանակ յուսով է, որ այդ կորստեանը պէտք է փոխարինեն նորա հարազատ ժառանգների եկեղեցասիրական և ազգասիրական գործերը իւրեանց անմահ յիշատակ ծնողի յարգը և անուներ իրաւամբ իւրեանց ևս սեպհականելով:

Սորա կեանքը և մահը նկարագրելուս միակ նպատակն լինելով ցոյց տալ ընթերցողաց թէ այժմեան նոր հասարակութիւնը որպիսի իշխանին է զնահատում և որպիսեղն ոչ թէ նորա կենդանութեան ժամանակ և թէ մահից յետոյ: Խնդրուեմք փոքրիկ տեղի շնորհէք յօղուածիս պատուական Արարատ ամնագրոյ թերթերում:

ԱՆՎՈՒՆԵՐԻ ՄԵՆԻՔ Եւ հիւսուցիչականց.

Ի 21 Յունիս 1872 օր.

Ի Շամախի:

Ո՛ր և իցէ յօղուածոց ի պատասխան կամ ի քննութիւն ուղղեալ յօղուածները յատկապէս կկնդրեմք և ինչպէս արժան է ուղղել այն լրագրաց՝ որոց մէջ հրատարակեալ են: Իսկ երբ չհրատարակուին, յայնժամ կարելի է դիմել այլ լրագրաց: Այս անդամ բացառութեամբ միայն կթողարկուի հետեւեալին:

ՄԻ ՔԼՆԻ ԽՕՍԲ

Ամեն մի մարդ իրաւունք ունի խօսելու, գատելու և գրելու, բայց չէ՛ որ այնպիսին և պիտի կենդանի խիղճ ունենայ, որ ամեն մի խօսուածք զրուածը նախ խղճի կրիտիկայի տակ զգէ և յետոյ յոյս աշխարհ զուրս բերէ: Եթէ ես ունիմ ձարտար լեզու, ինքս էլ հնարագէտ, գրիչս էլ սուր: Եթէ սուտ էլ ասելու լինիմ այնպէս, որ բաց ի ինձանից ճշմարիտ խօսողն էլ զարմանայ: Եթէ մի անձնական կիրք ունիմ դէպի մի որ և իցէ անհատ, որ իմ բնութեան չի յարմարվի և չի յարմարում, մի՞թէ պիտի մեռցնեմ բնական օրէնքը ինձանում և ոտի տակ տամ մէկի երախտիքը կամ պատիւը, զրպարտելով նրան: Այդպէս վարուելով, ի՞նչ է արդեօք այդպիսի անհատի նպատակը. քրիստոնէական պարտաւորութիւն է կատարում, ազգասիրութիւն է ցոյց տալի, թէ իրան կամենում է ձանաչեցնել շատերի աչքում հասկացող անձն: Շատ լաւ բան է համբաւներ, ազգային յառաջդիմութեան լուրեր, տեղական աւանդութիւններ և այլն հրա-

տարակել լրագրերի միջոցաւ, եթէ մարտը խղճով լինի գրուածը և ոչ անձնական կրքով: Գորանում մեղաւոր չէ և ոչ մի խմբագիր, եթէ տպուէ մի որ և իցէ աւանդութիւն կամ լուր, որ լինում են երբեմն կրքից շարժված ստայող բաներ, պատճառ, խմբագիրը չէ կարող ամեն տեղացի լինել կամ ծածկագէտ, որ կարողանայ իմանալ թէ ամեն բանի հանդամանքն, կամ գրողի սիրտը, միտքը, թէ արդեօք այս մարդը, որ խօսում է, ի՞նչ նպատակ ունի խօսելոյն և գրելոյն, և ստուգապէս է, թէ գրգռուած է, թէ վշտացած է, թէ մի հայաժանր կրքով է մի քանի կամ շատ անհատներից: Մէկը, որ կարողութիւն ունի խօսելու գրելու, մի՞թէ առանց դատողութեան խղճի մտաց պիտի անէ այն, ինչ որ միւսը չէր կարող անել իրան. մի՞թէ այնպիսին սովորել է հնարագիտութիւնը, որ իրանից տկար արգարին նուաճէ իւր կամքի տակ: Եթէ մէկը միւսի անբարոյական և անտեղի դատողութիւնների պատճառաւ կարողանում է միայն ներողամտաբար և անյիշատար կերպով յանդիմանել նորան կամ խրատել, մի՞թէ նա պէտք է ոխ, զարանակարութիւն պահէ իւր սրտում և թոյն ժանիքի տակ մինչև յարմար ժամանակը, որ ժայթքէ ի զուր առանց օգտի թունաւորելու նորան կամ միւսին, որովք երբ և իցէ մի ժամանակում խոցել են իրա սիրտը ճշմարիտ խօսքերով:

Մենք կարում ենք Յարթթ Ղուկիասի երբեմն Ղուկիասի տեղական աւանդութիւնների և բարբառների նկարագրութիւններ Մեղուի մի քանի համարներում իրրե Շամախուց ուղարկված, որ վեց ամիս զրանից ստաջ հալածված է ինքն Շամախուց իրան յայտնի հանդամանքների պատճառաւ դէպ ի հետաւոր տեղեր: Արախտում ենք, որ չի թագցնում իւր քանքարը, բայց եթէ ընդունէր, խորհուրդ կտայինք, որ փոխանակ իւր կամակները երկարացնելու լավ բաներով, բաւականաւոր տակաւին տեսածովը, Եթէ ես լինէի նորա մօտ կամ նա լինէր ինձ մօտ, ես խօսքով կխորհրդակցէի նորա հետ, և ոչ այսպէս:

Աերջպպէս, թէ ուղորդ թէ սուտ լաւ է նկարագրում, պատճառ, այն խարանը (զաղը) որ նա է ստացել ինքն իրա անխոհեմ վարվողութեամբը Շամախեցի շատերից, ուրիշ մէկ բանով չէ կարող վրէժխնդիր լինիլ, եթէ ոչ նոցա վատ կողմերը, վատ աւանդութիւնները իրանց երեսին տալով: Մի՞թէ չէիր կարողանում, Պ. Ղուկիաս, մինչև ձի նստելը մինչև հալածմունքի մէջ ընկնելը գրիլ այդ ճշմարտութիւնները. ո՞վ կարող էր արդեօք ձեռքդ բռնել. հիմա գրում ես հեռուից ի՞նչ նպատակով, նրանց ուղղութիւն տալու, թէ վրէժդ առնելու. . . . կարծեմ ջրաց էլ մտած կլինէք զուր հետաքրքրութիւնից ես զարմանում եմ, որ զու մինչև լարեկնեղանի շաբաթները ջրաղացի մօտ բաւական օրեր ես

անց կացրել մինչև քեզ հեռացնելը Համախոցիներին, ինչպէս է, որ մոռացել ես և դորան յիշելու:

Ինչ և իցէ Պ. Առևկես, Համախոց և մի քանի տեղերի վերաբերմամբ խօսքերիդ շատերը եմէ ուղորդ էլ չլինի, սուտ էլ չէ: Բայց ես կամենում եմ Սաղ. վանքի վերաբերմամբ մի քանի անտեղի խօսքերիդ մասին յետագայ դատողութիւնս ասել: — Յիրաւի ցաւելի է արդէն, որ չունի քո առաջվայ տեսած ուսումնարանը, որովհետև, չկայ այնքան արդիւնք, որով կարողանայ կառավարվել վանքը իւր միաբաններով, և ունենալ այնքան, որ ուսումնարանի համար կարողանայ պահել զոնէ մի երկու ընդունակ ուսուցիչ տալով նրանց ամեն մէկին 200 մանէթ բռնիկ: Յիշած թուումդ ուսուցանում էր Սարկաւագ Աւետիսն Փինաչեանց (այժմ արեղայ) թէ ի՞նչ պատճառաւ թողնց ուսումնարանը. — ահա լսիր, որ ցաւօք սրտի եմ ասում. — Գիւղականների վիճակը գիտե՛ս, թէ միայն հիւր պընալն է քեզ հարկաւոր և նրանց փափուկ հաւեր փայելելն. նոցա վիճակի վերայ իսկի մտածում ես, լսիր ես ասեմ նոցա երեսայոց կարգաւ ուսում առնելը, թէ քանի ամիս է լինում. — Երբ գիւղացին չունի դաշտային պարագմունքը, իւր անասուններն էլ գոմի մէջ կապված մինչդեռ պատրաստի խոտ ու դարման են ուտում. այն ժամանակ միտք է բերում գիւղական ծնօղը, թէ որդիս փոքր ինչ գրել կարգալ եմէ իմանար, հարկաւոր կգար, մեր գրերը նա կդրէր կկարդար հարկաւոր ժամանակում: Այսպիսի խորհրդով վստոված, տանում է գիւղի քահանայի կամ տիրացուի մօտ, որ ուսանի զոնէ մի քանի ամիս Այդ սկզբնաւորութիւնը լինում է սերմերը ցանկուց յետոյ հոկտեմբերի վերջում. այդ ամսից սկսած տևում է՝ և այն ոչ շարունակաբար, մինչև դատիկ լուսանալը: Այնուհետև ի՞նչ է անում գիւղացին, — անասուններին արձակում է գէպի դաշտը ապրիլին, մայիսին, մինչև յունիսի վերջը, զրանց պահող պէտք է, որ չմտնեն ուրիշի խոտերը և արտերը չուռնեն, որ իրանցից տուգանք չառնուի: կամ իրանց անասունները չը վերաւորվին (չգիշատվին) որովհետև իրանց հարկաւոր են միշտ, մանաւանդ տարվայ այգուկի ժամանակում, որ առանց զոցա գիւղականը թմեկը կտրած թռչունի պէս է: Ավքերն են պահպանում զրանց, — իրանց որդիները (ճշմարիտ է գիւղօրայքում լինում են տաւարածներ, ըստ մեծի մասին հարուստներն են յանձնում իրանց անասունները պահպանելու, նոյնպէս զոցա որդիները պարագվում են ուրիշ բաներով): Խոտերի հարելու ժամանակը գալիս է Յունիսին, իրանց օգնական հաց ու ջուր տանող պէտք է: Հանում է հունձն, հնձողներին համար դարձեալ ուտելիք խմելիք տանող պէտք է և հնձած խուր-

ձերը կրող կալի մէջ: Այլ կասելը վերջագաւ մինչև օգոստոսի վերջը, այնուհետև սերմն ցանել հարկաւոր է, դարձեալ զոցա — իրանց երեսայոց օգնականութեամբը: Ահա այդպէս է գիւղական երեսայոց վիճակը, որ համարեա թէ ուսումում են երկը կամ չորս ամիս: Սարգսն գիւղի երեսայքը ըստ մեծի մասին նոյն վիճակի մէջ են, բացառութեամբ մի քանի երեսաների, որոնք արդէն ուսումում են վանքում ծերունի Անանհօր և կամ գիւղի մէջ վանքի մի ընդունակ քահանայի մօտ (Սահակ անուն): Ծարվայ մեծ մասը ուսումնարանն թափուր լինելով աշակերտներից, մի քանի ամիսվայ ընթացքում մի տասն աշակերտ ունենալով, ինչպէս կառավարվէր ուսուցիչը ամսական 25 կամ 50 կոպ. առնելով աշակերտից, 71 թուականում Բագուից ուսուցիչ հրաւիրեցին նշանաւոր բռնկով յիշեալ Փինաչեանցին, քեզ եմ հարցնում Պ. Առևկես, զնա՞ր, թէ ոչ, դու հենց քո վերայ դատիր:

Դորանում զուք աւելի սխալվում էք, Պ. թէ «Անքումն կյտնէք ամենաբաղքը և շինձուքազաբաբարութիւն և ամենաչաղ հաւ», և ինքանի որ դիմակ գրած երեսիդ ուսում էիր վանքի հացն ամենաչաղ հաւով, և խմում էիր գինին շատ անգամ գնալով, մինչև այն տեղն էր հասնում բանը, որ մկրտում էիր շորերդ գինով, քաղաքավարութիւն էր, բայց երբ ստացար անբարոյական վարվողութեամբ մի քանի անգամ յանդիմանութիւններ ծերունի վանահօր և ուրիշների կողմից, այն ժամանակ ի հարկէ, լիզուղ սուր, ինքդ հեռի, ինչ որ ուզես կասես. բայց ցան այն է, որ շատերն էլ կհաւատան, չմտածելով որ դուք անձնական կրքից շարժուած էք գրում: Պարոն, Դուք դրտեղից իմացար, թէ նա տարեկան 30 բեռն գինի կուռնեայ, արդեօք կարաններն լցնելու և դարտակելու ժամանակ դուք մօտին կանգնած թուում էիր չափն, և հաշուի պակաս կամ աւել լինելն դուք որ տեղից էք իմանում, երբ ձեր ներկայութեամբ չէ լինում նորա ել ու մուտքը, կամ ատենադպիրը (որ երգուած է օրէնքին հաւատարիմ մնալու) որ և շատ անգամ իրա և կամ Առնստոտրականներից մէկի ներկայութեամբն են լցնվում գինիներն, և ծախվելու ժամանակ նոյնպէս ծածուկ չէ, ի՞նչպէս կասէ քեզ սուտը, և կամ ինչ հարկաւորութիւն ունի քեզ հետ խորհրդակցելու որ քեզ վերաբերեալ բան չէ: Անտեղի և շարամիտ երեակալութիւն: Դու համոզված ես գոնէ խղճիդ առաջև, որ վանքի հացն ուտելով շատ անգամ գնալու ժամանակը և զոհանալու փոխանակ անվայել . . . խօսքեր, որ նրանց հոգեկանին և տեղւոյ սրբութեանը ընդդէմ է եղել: արտաբերելով պարզ գիւղացիների և միաբանաց մօտ, շատ յանդիմանութիւններ են զարկուել երեսիդ, սակայն, էլի չի կարմրել ամօթով: Եթէ այն տեղերում էլ,

ուր որ լինելու էք, դիմակ գրած գովելու էք մինչև ձեր յանդիմանութիւններ ստանալը, վայնրանց և քեզ համար Ասացէք, խնդրեմ, որտեղ, մատենի որ յօղուածում է գրուած ձեր տուած նրէրքը, որ խնացուի թէ արքայութիւն է գնում թէ դժոխք. կամ քանի սև կոպէկ գցած կար աջահամբայր աջի համար և վերջապէս մէկ բանի համար մի սև կոպ. դոհած. Թող ձեր խիղճը ձեզ տանջէ ներսումը եթէ կենդանի է. Գուք չէք հասկանում այնքան տեղը, որ շատ ճշմարտութիւնների մէջ եթէ անձնական կիրք լինի խառնուրդ. կարող են եղած ճշմարտութիւններն էլ ստել: Գուք բնաւ երեւակայում էք այն վանքի (մի 12—15 տարի առաջ) դրութիւնն. գտնւում էր այն տեղ մի կտոր հաց, որ այն տեղով անցնողն վայելէր. գտնւում էր մի բաժակ գինի. գտնւում էր գոնէ մի յարմար սենեակ բնակութեան համար. դու կարող էիր վանքի բակումը աներկիւղ օձերից և թունաւոր զեռուներից ման դալու կամ նստելու. դու տեսել ես բաց ի մորենու թփերից մի տասը քսան խաղողի ծառ յարմար կանգնեցրած. եթէ հնձած հարած մորենու թփերը և խոտեղեն անտառի պէս բարձրացրացած բանջարները վառելու ժամանակ այդու մէջ, որ բարեկանան կրակին էր նմանում, տեսած լինէիր, և քանի մի յանդիմանութիւններ վերջին ժամանակներում ստացած չլինէիր այն ժամանակ ձեր խիղճն էր ձեզ թող չէր տալ զբարտանու մէկին կամ միսին: Եթէ վանքի մուտքը իրա վերայ գործ չգնուէր, որտեղից կունենար այն բաւական սենեակները, որոնց մէջ բնակում են թէ հիւրեր թէ ուխտաւորներ և առաջնորդներ պատահած ժամանակը: Եթէ այդպէս վերայ ամենայն տարի ծախս չլինէր, ինչպէս կարող էր գոյութիւն ունենալ մինչև այժմ: Եթէ մոռացել էք Մէյարու վանքը. ինչով էր աւել նա սորանից մի տասն ու հինգ տարի առաջ: Այդ վանքն էլ էիր գնացել, ինչպէս տեսար, բաց ի ջղիկներ և թունաւոր զեռուների տեսնելուց նորա մի քանի աւերակ շէնքերի մէջ ի նշ բաւականութիւններ էիր ստանում: Ժամանակը այդ չէ պահանջում, սիրելի, որ դուք անձնական կիրք ունենալու պատճառաւ, մարտն աշխատանքը առ ոչ ինչ համարէք, փոխանակ գովելու քաջակրկնու, պարտաւէք: Չեղ ահա կարելի է դարձնել այն խօսքը թէ դարձանդ հարկաւոր չէ մարագը անել, մարագինն միայն թէ հասնու:

Ն. Ի.

1. Երևան:

Հ Ա Շ Ի Ի Ծ Խ. Հ Ո Գ. Կ Պ Ր Ո Ց Ի Ն
Հ Ա Յ Ո Ց Մ Ո Ջ Պ Ո Վ Ո Ց:

Լուսաբերութեան Արարատ Ամսագրայ.

Անցած Յունիսի վերջում շարունակ մի շարան հարցաքննութիւն էր մեր Ծխական - Հոգևոր Կարգում, իսկ ամսիս 9 ին, անտեսական և ուսումնական մասանց հաշիւները ժողովրդին տալու համար, կատարվեցաւ 2-րդ-ի հետեւեալ կարգաւ. 1) Աւուցիչ Պ. Յովհաննէս Տէր - Մոսկէսեանը կարգաց ուսումնական մասի հաշիւը և հրաւիրեց այցելուներին մի ձեռաց հարցաքննութիւն անել աշակերտներին, որը կատարվելուց յետոյ ժողովուրդի ուշքը նա դարձրուց մի քանի մանկավարժական խնդիրների և ծնողների պէպի ուսումնարանը և իրանց զաւակները ունեցած պարտքերի վերայ: 2) Հոգաբարձութեան կողմից նորա Անգամ Պ. Պօղոս Ըլթեանցը կարգաց անտեսական հաշիւը և վերջը մի քանի յորդորանք ուսումնարանին նեցուկ լինելու համար Այլ և յայտնեց, որ ուսումնարանին պատկանեալ՝ չորս Հոգաբարձուների 500 ական և եկեղեցական 6000 մանէթով բացած, մոմաշինութեան գործարանը (սորա մասին մանրամասն տեղեկութիւնները առանձին յօղուածով կուղարկենք Երարատին) նորան մօտիկ ապագայում նիւթական ապահովութիւն է խոստանում: 3) Աւուցիչ Պ. Յովհաննէս Զիգեանեանցը կարգաց ծառ՝ նոր սերունդին ուրիշ ուսման հետ արուեստներ ևս սովորացնելու համար, և նա (Աւուցիչների կարգուները կուղարկվին արարատին: Եւ 4) Կարգի ամեն գործերին վերահասու Յովհաննէս աւագ քահանայն Խոսրովեանց յայտնեց Աւհափառ Աւթողիկոսի Առնդակը. որով յայտնում էր նորին Աւհափառութիւնը իւր օրհնութիւնը և գոհունակութիւնը Մոզրոկու Հայ հասարակութեանը և մանաւանդ Հոգաբարձութեանը, որ ջանք է անում նորին Օծութեան հիմնած Կարգը բարեբաւանել, բաց անելով—վերոյիշեալ մամի գործարանը, որից դուրս եկած մոմեղեններից մի փոքր քանակութիւն վառուել է այս տարի Ս. Միլոնի օրհնութեան հանդիսում: Աերջը նա հրաւիրեց ամենքին ոտքի կանգնել և աշակերտները նորա հետ միասին մաղթանք վերահանակեցին Աստուծոյ Օգոստափառ Ապսեր, նորա բնասնեաց և Աւհափառ Աւթողիկոսի ու Հայ ազգի համար: Աւստի մանրամասն նկարագրութիւնները աւելորդ և անշահ համարելով՝ միայն զլսաւոր նիւթերը հարկուում ենք և խնդրում հրատարակել նրանց:

Մարտ 18 71 ամի — Յունիսից Յունիս:

Առ 1 ն Յունիսի 1871 թ. պատրաստի փող կար 56 20 1/2